ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<<28>> դեկտեմբերի 2012թ. N: 399-Ա ք. Գյումրի

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով <<Հայաստանի Հանրապետության 2012 թվականի պետական բյուջեի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի թիվ 1 հավելվածի՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանին նախատեսված <<Գործադիր իշխանության պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում>> ծրագրի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման <<Այլ նպաստներ բյուջեից>> հոդվածով նախատեսված հատկացումները, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի <<Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին>> թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.12-րդ կետի <<բ>> ենթակետի դրույթներով, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության սոցիալական ապահովության բաժնի կողմից ընտանիքի սոցիալական վիճակի ուսումնասիրությունների եզրակացությունները և ֆինանսական օգնություն տրամադրելու նպատակով ստեղծված աշխատանքային խմբի 2012 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 21 արձանագրությամբ ներկայացրած առաջարկությունը.

1.Քաղաքացիներին ցուցաբերել ֆինանսական օգնություն համաձայն N1 հավելվածի.

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ – տնտեսական զարգացման վարչության պետ Լ.Մարտիրոսյանին՝ ապահովել վճարման կատարումը:

Ա.ԳԻՉԻՐՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է